

Համարը N 1428-Ն

Տեսակը Ինկորպորացիա

Տիպը Որոշում

Կարգավիճակը Գործում է

Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2005.09.28/61(433)  
Հոդ. 1178

Ընդունման վայրը Երևան

Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն

Ընդունման ամսաթիվը 01.09.2005

Ստորագրող մարմինը ՀՀ վարչապետ

Ստորագրման ամսաթիվը 10.09.2005

Վավերացնող մարմինը ՀՀ Նախագահ

Վավերացման ամսաթիվը 13.09.2005

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 08.10.2005

Ուժը կորցնելու ամսաթիվը

☐ Փոփոխողներ և ինկորպորացիաներ

Մայր փաստաթուղթ: [Կառավ, 01.09.2005, N 1428-Ն](#)

Մայր փաստաթղթին փոփոխող փաստաթղթերը`	Համապատասխան ինկորպորացիան`
<a href="#">Կառավ, 16.07.2015, N 789-Ն</a>	<a href="#">Կառավ, 01.09.2005, N 1428-Ն</a>
<a href="#">Կառավ, 01.10.2015, N 1114-Ն</a>	Կառավ, 01.09.2005, N 1428-Ն

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԵՎ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ` ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐԱՅՈՎ ԵՎ ՍՊՈՐՏՈՎ ԶԲԱՂՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԶԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Վավերացնում են»  
Հայաստանի Հանրապետության  
Նախագահ Ռ. Քոչարյան  
13 սեպտեմբերի 2005 թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

1 սեպտեմբերի 2005 թվականի N 1428-Ն

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԵՎ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ` ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐԱՅՈՎ ԵՎ ՍՊՈՐՏՈՎ ԶԲԱՂՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԶԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Մանկապատանեկան սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան` Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հաստատել մանուկների և պատանիների՝ ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար անհրաժեշտ պայմանների նվազագույն չափորոշիչները՝ համաձայն հավելվածի:

1.1. Սույն որոշումը տարածվում է բոլոր պետական բյուջեից ֆինանսավորվող մարզադպրոցների վրա: **(1.1-ին կետը լրաց. 16.07.15 N 789-Ն, 01.10.15 N 1114-Ն)**

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հայաստանի Հանրապետության  
վարչապետ**

**Ա. Մարգարյան**

2005 թ. սեպտեմբերի 10  
Երևան

Հավելված  
ՀՀ կառավարության 2005 թվականի  
սեպտեմբերի 1-ի N 1428-Ն որոշման

**ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԵՎ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ՝ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՈՒՐԱՅՈՎ ԵՎ ՍՊՈՐՏՈՎ ԶԲԱՂՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ  
ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՆԿԱԶԱԳՈՒՅՆ ԶԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ**

1. Մանուկների և պատանիների ֆիզիկական զարգացման, առողջ ապրելակերպի և մարզական հերթափոխի պատրաստման ծրագրերն իրականացնում են՝

1) մարզական ուղղվածության արտադպրոցական ուսումնական հաստատությունները (այսուհետ՝ մարզադպրոց)՝ մանկապատանեկան մարզադպրոցները, մարզական-տեխնիկական դպրոցները, օլիմպիական հերթափոխի մանկապատանեկան մարզադպրոցները.

2) օլիմպիական հերթափոխի ուսումնարանները և մարզական ուղղվածությամբ միջին մասնագիտական կրթություն և ուսուցում իրականացնող օլիմպիական հերթափոխի քոլեջները (այսուհետ՝ քոլեջ):

**(1-ին կետը խմբ. 16.07.15 N 789-Ն)**

1.1. Մարզադպրոցն ստեղծվում է մեկ կամ ավելի մարզածևերի բաժանմունքներով (կառուցվածքային միավորներով ըստ մարզածևերի) առնվազն 14 խմբի առկայության դեպքում: Բաժանմունքների քանակը սահմանում է նրա հիմնադիրը՝ հաշվի առնելով նյութատեխնիկական բազայի թողունակությունը և պայմանները, մասնագիտական կրթությամբ մարզիչ-մանկավարժների առկայությունը և անհրաժեշտ ֆինանսական միջոցներով ապահովվածությունը:

**(1.1-ին կետը լրաց. 16.07.15 N 789-Ն)**

1.2. Գյուղական այն համայնքներում, որտեղ հանրակրթական դպրոցներում սովորողների թիվը չի գերազանցում 300-ը, և առկա են սույն որոշման 1.1-ին կետում նշված անհրաժեշտ պայմանները, ավագանու որոշմամբ կարող են գործել մարզադպրոցներ՝ առնվազն 8 խմբով:

**(1.2-րդ կետը լրաց. 16.07.15 N 789-Ն)**

1.3. Մարզադպրոցում սահմանվում է 6-օրյա աշխատանքային շաբաթ:

**(1.3-րդ կետը լրաց. 16.07.15 N 789-Ն)**

2. Մարզական կազմակերպություններում ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ին և գործում ամբողջ տարվա ընթացքում՝ ապահովելով ուսումնական ծրագրերով 47 շաբաթվա համար նախատեսված շուրջամյա պարապմունքները: Համապատասխան պայմանների առկայության դեպքում դպրոցական արձակուրդների ժամանակ մարզական ուսումնական ծրագրերն իրականացվում են մարզական ձամբարներում:

**(2-րդ կետը փոխ. 16.07.15 N 789-Ն)**

3. Մարզական կազմակերպությունների ուսումնամարզական խմբերի մեկ պարապմունքի տևողությունն է՝

№	Ուսումնական խմբերի անվանումը	Շաբաթական առավելագույն ծանրաբեռնվածությունը (դասաժամ)	Մարզադպրոցներում, քոլեջներում	Մեկ շաբաթվա պարապմունքների թիվը	Մեկ պարապմունքի տևողությունը (դասաժամ)
1.	Նախնական պատրաստության	6-8	մարզադպրոց	3-4	2
2.	Ուսումնամարզական (1-3-րդ տարի)	12-18	մարզադպրոց	4-6	3
3.	Ուսումնամարզական (4-5-րդ տարի)	20-22	մարզադպրոց	6	ոչ ավելի, քան 4
4.	Մարզական կատարելագործման (1-ին տարի)	24	մարզադպրոց, քոլեջի 7-9-րդ դասարաններ	6	4

5.	Մարզական կատարելագործման (2-3-րդ տարի)	26-28	քոլեջի 10-12-րդ դասարաններ, 1-4-րդ կուրսեր	10-12	2-3
6.	Մարզական վարպետության բարձրացման (միայն մարզական քոլեջներում)	30-36	քոլեջի 2-4-րդ կուրսեր	12	2-3

**(3-րդ կետը խմբ. 16.07.15 N 789-Ն)**

3.1. Այն դեպքում, երբ անցկացվում է օրական 2 մարզում, 1 ուսումնամարզական պարապմունքի տևողությունը չի կարող գերազանցել 3 ակադեմիական ժամը:

**(3.1-ին կետը լրաց. 16.07.15 N 789-Ն)**

4. Ֆիզիկական արատ և բժշկական հակացուցում չունեցող մանուկներին ու պատանիներին մարզադպրոց ընդունվելու և ընտրած մարզաձևերով մարզվելու համար ապահովվում են հավասար և բարենպաստ պայմաններ:

5. Մարզադպրոց ընդունվող երեխաների նվազագույն տարիքն՝ ըստ մարզաձևերի պետք է լինի՝

ա)	սպորտային և գեղարվեստական մարմնամարզություն (աղջիկներ), գեղասահք	6 տարեկան
բ)	սպորտային մարմնամարզություն (տղաներ), սեղանի թենիս, ակրոբատիկա, շախմատ, շաշկի, սպորտային պարեր, լող, ջրացատկ	7 տարեկան
գ)	լեռնադահուկային սպորտ, բասկետբոլ, բադմինթոն, ֆուտբոլ, դահուկավազք, մականախաղ	8 տարեկան
դ)	բիաթլոն, աթլետիկա, առագաստանավային սպորտ, ջրագնդակ, վոլեյբոլ, ձեռքի գնդակ	9 տարեկան
ե)	հեծանվային սպորտ, ծիսասպորտ, սուսերամարտ, բռնցքամարտ, ըմբշամարտ, հրաձգություն, թիավարություն, ձյուդո, ծանրամարտ	10 տարեկան
զ)	նետաձգություն, տրիաթլոն	11 տարեկան
է)	ծանրամարտ (աղջիկներ)	12 տարեկան

**(5-րդ կետը լրաց. 16.07.15 N 789-Ն)**

6. Այն մարզիկները, որոնց 18 տարին չի լրացել և որոնք չեն իրացրել նախապատրաստական փուլի ծրագրերը, չեն անցել ամենամյա ատեստավորումը, շարունակում են մարզումները՝ նախապատրաստական խմբերի համար նախատեսված ծանրաբեռնվածությամբ:

6.1. Մարզական խմբերում պարապողների նվազագույն թիվը սահմանվում է հիմնադրի որոշմամբ և ամրագրվում է կազմակերպության կանոնադրությամբ՝ ըստ պատրաստության փուլերի:

**(6.1-ին կետը լրաց. 16.07.15 N 789-Ն)**

7. Մարզական կազմակերպություններում մանուկների և պատանիների հետ ուսումնամարզական ծրագրերն իրականացնում և պարապմունքներն անցկացնում են մասնագիտական կրթություն ունեցող մարզիչ-մանկավարժները, իսկ նրանց բժշկական և սանիտարահիգիենիկ հսկողությունն իրականացնում են սպորտային բժիշկը և բուժքույրը:

**(7-րդ կետը փոփ. 16.07.15 N 789-Ն)**

8. Սպորտային բժիշկները՝

ա) իրականացնում են ֆիզիկական կուլտուրայով և սպորտով պարապողների առաջնային բժշկական օգնություն և սպասարկում, վարակիչ հիվանդությունների հայտնաբերման ուղղությամբ հսկողություն՝ ներառյալ արտաքին զննությունները, միկոզի և այլ մաշկային վարակիչ հիվանդությունների ախտանշաններով անձանց մարզասրահից օգտվել չթույլատրելու նպատակով:

բ) անցկացնում են պարապողների ընթացիկ և փուլային բժշկական հետազոտում, բարձրակարգ մարզիկների դեպքում՝ նաև խորացված բժշկական հետազոտում (տարեկան ոչ պակաս, քան 2 անգամ):

գ) անցկացնում են բուժական միջոցառումներ պարապողների աշխատունակության վերականգնման համար, կազմակերպում մրցումների կամ մարզումների ընթացքում ստացված վնասվածքների բուժումը.

դ) իրականացնում են մարզական միջոցառումների, ուսումնամարզական հավաքների, մրցումների և ուսումնամարզական պարապմունքների նկատմամբ բժշկական հսկողությունը.

ե) գնահատում են մարզիկների մարդաչափական (անտրոպոմետրիկ) չափանիշները և ֆունկցիոնալ վիճակի մակարդակը, հրահանգներ տալիս մարզման բեռնվածության ծավալների շտկման վերաբերյալ.

զ) իրականացնում են հսկողություն՝ մրցումների կամ մարզումների ընթացքում վնասվածքների կանխարգելման և ստացված վնասվածքների բուժման համար:

**(8-րդ կետը փոփ., խմբ., լրաց. 16.07.15 N 789-Ն)**

9. Մանուկների և պատանիների՝ ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար անհրաժեշտ մարզական կառույցների չափերը պետք է լինեն՝

NN ը/կ	Մարզաձևը	Մարզաբազայի չափերը (մետր)		
		երկարություն	լայնություն	բարձրություն
1.	Բռնցքամարտ	18	12	4
2.	Ըմբշամարտ	18	12	4
3.	Ջյուդո	18	16	4
4.	Ծանրամարտ	18	9	5
5.	Սուսերամարտ	18	12	4
6.	Սպորտային մարմնամարզություն, զեղարվեստական մարմնամարզություն	28 17	16 14	6 6
7.	Բասկետբոլ	26	16	7
8.	Վոլեյբոլ	24	15	7
9.	Չեռքի գնդակ	42	22	6
10.	Թենիս	36	18	8
11.	Սեղանի թենիս	7	4.5	5
12.	Բադմինթոն	15	8	7
13.	Լող	25/50	13/25	

10. Մարզակառույցի միաժամանակյա թողունակությունը կախված է պարապողների մարզական որակավորման մակարդակից և սպորտով զբաղվելու ժամանակահատվածից, ինչպես նաև մարզաձևերի առանձնահատկություններից:

11. Մասնագիտացված մարզակառույցներում տվյալ մարզաձևի մարզագույքից միաժամանակ օգտվող մարզիկների թիվը պետք է լինի՝

NN ը/կ	Մարզակառույցի անվանումն ըստ մարզաձևի	Պարապողների թիվն ըստ նրանց մարզական որակավորման մակարդակի և մարզման ժամանակահատվածի			
		նախապատրաստական փուլի ժամանակահատվածում պարապողների թիվը	ուսումնամարզական փուլի պարապողների թիվը	մարզական կատարելագործման փուլ (1-ին տարի)	նվազագույն տարածքը՝ մեկ պարապողի հաշվարկով (քառ. մ)
1.	Բռնցքամարտի մեկ ռինգի և մարզագույքի հաշվարկով	15	10-6	4	13
2.	Ըմբշամարտի մեկ գորգ մարզագույքի հաշվարկով	16	12-6	4	22

3.	Չյուղոյի մեկ տատամի մարզագույքի հաշվարկով	20	16-8	6	12
4.	Ծանրամարտի մեկ հարթակ և մարզագույքի հաշվարկով	15	12-8	5	14
5.	Սուսերամարտի մեկ մարտուղյակ մարզագույքի հաշվարկով	7	6-4	3	20
6.	Գեղարվեստական մարմնամարզության մեկ մարզադահլիճի հաշվարկով	20	15-6	4	32
7.	Սպորտային մարմնամարզության մեկ մարզագործիքի հաշվարկով	5-6	5-3	2	11
8.	Բասկետբոլի մեկ խաղադաշտի հաշվարկով	18	16-12	12	30
9.	Վոլեյբոլի մեկ խաղադաշտի հաշվարկով	20	18-16	16	18
10.	Ձեռքի գնդակի մեկ խաղադաշտի հաշվարկով	22	20-18	18	45
11.	Թենիսի մեկ կորտի հաշվարկով	6	6-4	2	108
12.	Սեղանի թենիսի մեկ սեղանի հաշվարկով	4	2	2	9
13.	Բադմինթոնի մեկ խաղադաշտի հաշվարկով	8	6-4	2	16
14.	Ֆուտբոլ	18	17	16	-
15.	Մականախաղ	15	14-10	8	-
16.	Աթլետիկա	14	10-6	4	-
17.	Հեծանվային սպորտ	12	9-6	5	-
18.	Գեղասահք	15	10-7	5	-

19. Հրաձգություն	12	8-6	5	-
20. Ձիասպորտ	10	10-7	4	-
21. Լող	12	10-5	4	-
22. Ջրագնդակ	14	13-9	9	-
23. Ջրացատկ	12	10-6	5	-

12. Մարզակառույցներում տեխնիկայի անվտանգության միջոցները նպատակաուղղված են՝  
ա) ուսումնամարզական պարապմունքների և մրցումների անցկացման անվտանգության ապահովմանը,  
բ) անվտանգության գոտիների որոշմանը,  
գ) մարզական սարքավորումների, բոլոր տեսակի էլեկտրասարքավորումների և գործիքների օգտագործման կանոնների պահպանմանը:

13. Մարզակառույցների սանիտարահամաճարակային ռեժիմի ապահովման նպատակով իրականացվում են՝  
ա. մարզակառույցների (ցնցուղարան, հանդերձարան, սանհանգույց), ինչպես նաև լողավազանների շենքերի և մարզական գույքի ամենօրյա մաքրման և ախտահանման աշխատանքներ,

բ. մարզակառույցների շենքերի (ցնցուղարան, հանդերձարան, սանհանգույց), ինչպես նաև լողավազանների արտադրական հսկողություն համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված լիազոր մարմնի կողմից ընդունված սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի պահանջների,

գ. մարզակառույցների շենքերի մաքրման, ախտահանման աշխատանքների նկատմամբ ամենօրյա հսկողություն՝ տվյալ կազմակերպության ղեկավարի կողմից նշանակված պատասխանատուի կողմից՝ սեփական մարզակառույցի առկայության դեպքում,

դ. մարզակառույցների շենքերում միկրոկլիմայի պահանջների ապահովում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված լիազոր մարմնի կողմից հաստատված նորմերին համապատասխան:

*(13-րդ կետը խմբ. 16.07.15 N 789-Ն)*

*(հավելվածը խմբ., լրաց., փոփ. 16.07.15 N 789-Ն)*

**Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար-նախարար**

**Մ. Թովուզյան**